

Մարգարեա Գազիկ Միրիջանյանի շնորհավորական ուղերձն Անկախության տոնի առթիվ

21.09.2018



Արմավիրի մարզի հարգելի բնակիչներ, շնորհավորում եմ ձեզ և ողջ հայ ժողովրդին՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 27-րդ տարեդարձի առթիվ:

1991 թվականի սեպտեմբերի 21-ին ողջ հայ ժողովուրդը միակամ ու միաձայն ի լուր աշխարհի հայտարարեց, որ վերստանձնում է սեփական ճակատագիրը տնօրինելու պատասխանատվությունն ու պատիվը: Եվ այդ օրը դարձավ համայն հայության պատմական կենսագրության ամենակարևոր օրը, որը հայ ժողովրդի կյանքում նոր ուղի բացեց, այն է՝ անկախության ուղին:

Սակայն բոլորս գիտենք, որ անկախությունը նվեր չտրվեց մեր ժողովրդին, այն ձեռք բերվեց բազում դժվարությունների, պատերազմի ու մաքառումների գնով: Եվ մենք՝ երախտապարտ սերունդներս, չմոռանալով այդ ամենը, մեր հնարավորությունները, գիտելիքներն ու կարողությունները պետք է ծառայեցնենք իրականություն դարձած այս դարավոր երազանքի հարատևությանը:

Միայն այդ պարագայում մենք կարող ենք վստահորեն ասել, որ մեր անկախությունն այլևս անկասելի է, իսկ սեպտեմբերի 21-ը մեր ազգային հպարտության, լինելիության առհավատյան է:

Եվս մեկ անգամ շնորհավորելով մեր ազատ ու անկախ հայրենիքի տոնը՝ նորանոր ձեռքբերումներ ու հաղթանակներ եմ մաղթում Հայոց աշխարհին, հավերժ փառք ու հիշատակ Հայոց ազատության համար զոհվածներին, անկոտրում կամք ու արևշատություն Հայ ժողովրդին:

Կեցցե Հայաստանի Հանրապետությունը: